«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ "ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ,ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ,ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԳՀԱՊՁԲ-2020/8-3-ԵՊԲՀ-3>>

ք. Երևան «____» «_____» 2020 թ.

«**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր՝ **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Վանդիստ» ՍՊԸ**-ը, ի դեմս տնօրեն **Վ.Մուրադյան**-ի, որը գործում է **«Վանդիստ» ՍՊԸ**-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1527120 (մեկ միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 N 4, 31 և 34 չափաբաժինների մասով երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«Վանդիստ» ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 17/30,Սայաթ-Նովա 24/2,
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 20500-2226509 1001
h/h 11500166513800	ՀՎՀՀ 02705726
ՀՎՀՀ 01503448	Հեռ՝ +374-010 52-04-96
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	Էլ. Հասցե՝ van_muradyan@yahoo.com
	Տնօրեն՝ Վան Մուրադյան
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.06.19 16:26:54 AMST

Digitally signed by
MURADYAN VAN
3105840125
Date: 2020.06.18 15:24:43
GMT+04:00

Հավելված N 1
«   » «   » 2020 թ. կնքված
*<<**ԳՀԱՊՁԲ-2020/8-3-ԵՊԲՀ-3**>> ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը,ֆիրմային անվանումը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
4	302322 31/5	Կոշտ սկավառակի սարք 3	Agestar / Agestar / <3UBT6- G-Black> для 2.5'' SATA HDD. (USB3.1type 2) White / Agestar LLC	2.5 & 3.5 չափի SATA3 ինտերֆեյսով և 6ԳԲ/վ արագությամբ կոշտ սկավառակի արտաքին տեղադրման և միացման սարք, գույնը՝ սև, SATA USB 3.0 արտաքին ինտերֆեյսներով, նախատեսված միաժամանակ 2 կոշտ սկավառակ միացնելու և պատճեհանելու համար HDD Docking Station SuperSpeed: Plastic 2.5 & 3.5 Black SATA USB 3.0 6 GB/sec Dual Bay Hard Drive Dock	հատ	28980	57960	2	ք.Երևան ,Կորյունի 2	2	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
6	302371 13/1	Ցանցային կոնեկտոր 1	Ցանցային կոնեկտոր / EZ-RJ45 / EZ-RJ45 5E / Everest	Ցանցային կոնեկտոր EZ-RJ45 for CAT5e with Internal Ground and with EZ-RJ45 CAT5e Strain Relief	հատ	450	225000	500	ք.Երևան ,Կորյունի 2	500	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

			Media Solutions INC								
7	30237113/2	Ցանցային կոնեկտոր 2	Ցանցային կոնեկտոր / EZ-RJ45 / EZ-RJ45 6E / Everest Media Solutions INC	Ցանցային կոնեկտոր EX-RJ45 Cat6 Connector and with EZ-RJ45 CAT6 Strain Relief	հատ	54	27000	500	ք.Երևան ,Կորյունի 2	500	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
18	31221230/1	Մալուխ patch cord cat6a UTP 0.5, 1, 2, 3, 5մ	Մալուխ / Patch cord ExeGate UTPRJ45-RJ45-C6-0,5M BL,UTP, cat.6,0,5м, синий / CAT 6 EX282024RUS / ExeGate Limited	Patch cord UTP CAT6a մալուխներ, երկարությունը 0.5m, 1m, 2m, 3m, 5m (կոմպլեկտ), գունավոր, թթվածնից ազատ մաքուր պղնձե մետաղալարեր, ոսկեզօծ կոնտակտներով, ethernet: 600 MHz, 8P8C, RJ45, էկրանավորած զույգ լարերով, պատրաստված մալուխների Fluke-ով փորձարկում	հատ	9780	489000	50	ք.Երևան ,Կորյունի 2	50	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
19	30237132/2	Մալուխ համակարգ-չային micro USB	Մալուխ համակարգ-չային / USB 2.0 Type A Male to USB Micro / USB 2.0 Type A Male to USB Micro CNE-USBM1B	Մալուխ համակարգչային USB 2.0 Type A Male to USB Micro B Male Cable ~0.15-0.2մ Computer USB 2.0 Type A Male to USB Micro B Male Cable ~0.15-0.2m	հատ	1500	22500	15	ք.Երևան ,Կորյունի 2	15	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

			/ ASBIS LLC								
20	30237132/3	Մալուխ համակարգ-չային micro USB 3.0	Մալուխ համակարգ-չային / USB 3.0 / USB 3.0 Male USB A to Male Micro USB Note 3 S5 / Samsung LLC	Մալուխ համակարգչային USB 3.0 Male USB A to Male Micro USB B USB Cable, ~0.5 m արտաքին կոշտ սկավառակի համար, հավաստագրված Computer USB 3.0 Male USB A to Male Micro USB B USB Cable, 0.5 m Cable Lead for External Hard Drive Disk Storage Certified	հատ	2490	24900	10	ք.Երևան ,Կորյունի 2	10	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
21	30237132/4	Մալուխ համակարգ-չային micro USB 3.1 Type C	Մալուխ համակարգ-չային/ USB 3.1 TypeC to Type-C Data & Charging Cable / USB 3.1 Type-C to TypeC Data & Charging Cable	Մալուխ համակարգչային USB 3.1 Type-C to Type-C Data & Charging Cable Մալուխ տվյալների ≤5 Գբ/վ և լիցքավորման ≤3 Ա համար, 0.5-1 մ, հավաստագրված Computer USB 3.1 Type-C to Type-C Data (≤5 Gbps) & Charging (≤3A) Cable 0.5-1m Certified	հատ	4980	24900	5	ք.Երևան ,Կորյունի 2	5	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

			CNS-USBC9 / ***ASBIS LLC***								
23	302371 11/5	Մարտկոց 1.5Վ ԱԱ	Մարտկոց / 1.5Վ ԱԱ(AA / Մարտկոց 1.5Վ ԱԱ(AA / VERBATIM CORPORATION	Մարտկոց 1.5Վ ԱԱ (AA) չափի, պահպանման ժամկետը առնվազն մինչ 2029 թ.	հատ	480	48000	100	ք.Երևան ,Կորյունի 2	100	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
26	302371 11/8	Մարտկոց 9Վ	Մարտկոց 9Վ, 6LF22/MN1604/ / 9Վ / 6LF22/MN1604/ / VERBATIM CORPORATION	Մարտկոց 9Վ, 6LF22/MN1604/Chrona չափի, պահպանման ժամկետը առնվազն մինչ 2025 թ.	հատ	2790	27900	10	ք.Երևան ,Կորյունի 2	10	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
27	302371 11/9	Մարտկոց 12Վ	Մարտկոց / Մարտկոց 12Վ /12Վ A23/MN21/ VERBATIM CORPORATION	Մարտկոց 12Վ A23/MN21 չափի, պահպանման ժամկետը առնվազն մինչ 2025 թ.	հատ	1500	15000	10	ք.Երևան ,Կորյունի 2	10	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
28	302371 11/10	Մարտկոց 1.5Վ ԱԱ վերալիցքավորվող	Մարտկոց / Մարտկոց 1.5Վ ԱԱ /1.5Վ ԱԱ (AA) /	Մարտկոց 1.5Վ ԱԱ (AA) չափի վերալիցքավորվող Rechargable 2500mAh, շահագործման երաշխավոչված 5 տարի ժամկետ	հատ	3500	105000	30	ք.Երևան ,Կորյունի 2	30	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

			VERBATIM CORPORATION								
29	30237111/11	Մարտկոց 1.5Վ ԱԱԱ վերալիցքավորվող	Մարտկոց / 1.5Վ / 1.5Վ ԱԱԱ (AAA) / VERBATIM CORPORATION	Մարտկոց 1.5Վ ԱԱԱ (AAA) չափի վերալիցքավորվող Rechargable 750mAh, շահագործման երաշխավոչված 5 տարի ժամկետ	հատ	2000	60000	30	ք.Երևան ,Կորյունի 2	30	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում
31	30237137/1	Տեսաազդանշանի սարք USB-Video	Արտաքին գրավման սարք անալոգային և թվային / Blackmagic Design Intensity Shuttle / Blackmagic Design Intensity Shuttle / 10-bit HD/SD Video Capture/Playback Device / Black magic Design	Արտաքին գրավման սարք անալոգային և թվային աղբյուրներից Intensity USB 3.0 Ինտերֆեյս՝ SuperSpeed USB 3.0 տվյալների փոխանցման արագությամբ 4.8 Gbps Գբ/վ: HDMI մուտքային և ելքային աջակցությամբ 8-channel ձայնի. HDMI ֆորմատների աջակցություն՝ 525 NTSC, 625 PAL, 720p և 1080i/p: HDMI v1.3: YUV 4: 2: 2 և աջակցում է 10-bit-ng video. Անկախ անալոգային մուտքային / ելքային՝ բաղադրիչ, կոմպոզիտային և S-Video. Ձայնային միջոցները / արդյունքները: 2x channel RCA HiFi աուդիո աջակցությամբ 24bit. Աջակցվող HD ձևաչափեր ' 1080i50, 1080i59.94, 1080i60,	հատ	150000	300000	2	ք.Երևան ,Կորյունի 2	2	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

				1080p23.98, 1080p24, 1080p25, 1080p29.97, 1080p30, 720p50, 720p59.94, 720p60: Աջակցվող SD ձևաչափեր ' 625i / 50, 625p PAL և 525i / 59.94, 525p NTSC, 480p: Աջակցություն 12 Մբ/վ հոսքի Online JPEG ձևաչափով վիդեո գրավման համար 1920x1080-ի համար: Աջակցություն Up Conversion (upscaling) իրական ժամանակում SD վիդեո 1080HD և 720HD. Աջակցում է Adobe Premiere Pro CC 2019-ի ներքին էֆեկտները ձևաչափերի համար՝ DV, DVCPRO HD, MJPEG և ոչ սեղմված տեսանյութեր: USB 3.0 ինտերֆեյսը պետք է ապահովի 900ma հոսանքի ուժը `Intensity Shuttle-ը սնուցվում է USB ինտերֆեյսի միջոցով: OS աջակցություն: Microsoft Windows 7/8/10 x64, Mac OS X 10.9 Mavericks, Mac OS X 10.10 Yosemite կամ ավելի ուշ: Մատակարարման կոմպլեկում՝ USB 3.0 սարք, SD քարտ ծրագրային ապահովման և օգտագործողի ուղեցույցով Երաշխիք: 1 տարի:							

34	30237460/1	Համակարգչային ստեղնաշար+մկնիկ անլար	Համակարգչային ստեղնաշար+մկնիկ անլար / Logitech / Km-220 / Logitech INC	Համակարգչային ստեղնաշար+մկնիկ KM միայն անգլերեն տառերով ինտերֆեյս՝USB Համակարգի պահանջները. Windows® 10, Windows 7 կամ Windows 8, USB պորտ, Տեխնիկական բնութագրեր Մուկ՝ Սենսոր ՝ բարձր ճշգրտության օպտիկական հետևում Սենսորի զգայունություն ՝ 1000 դպ Կոճակների քանակը ՝ 3 Ոլորման անիվ ՝ այո (մեխանիկական) Ոլորման կոճակներ. Միջին կոճակ Մարտկոցի աշխատանքային ժամկետ (մկնիկ) ՝ ≥12 ամիս Մարտկոցի տեսակը (մկնիկ) ՝ 1 AA մարտկոց Ստեղնաշար Մարտկոցի աշխատանքային ժամկետ (ստեղնաշար) ՝ ≥24 ամիս	հատ	24990	99960	4	ք.Երևան ,Կորյունի 2	4	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում

				Մարտկոցի տեսակը (ստեղնաշար) `2 AAA մարտկոց Անլար տիրույթ `10 մ Անլար տեխնոլոգիա. Logitech նանոմետր Երեք տարվա սահմանափակ տեխնիկայի երաշխիք							

**Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:*
** N 4, 31 և 34 չափաբաժինների մասով երաշխիքային նվազագույն ժամկետը սահմանվում է՝ 365 օրացուցային օր:*
**Տեխնիկական բնութագրերում անգլերեն տառերով սահմանված բոլոր արտահայտությունները հանիսանում են որպես միջազգային ընդունված տերմիններ:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Վանդիստ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 17/30,Սայաթ-Նովա 24/2,
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500-2226509 1001
ՀՎՀՀ 02705726
Հեռ՝ +374-010 52-04-96
Էլ. Հասցե՝ van_muradyan@yahoo.com
Տնօրեն՝ Վան Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.06.19 16:27:22 AMST

Digitally signed by MURADYAN VAN 3105840125
Date: 2020.06.18 15:22:33 GMT+04:00

Հավելված N 2
« » « » 2020 թ. կնքված
<<ԳՀԱՊՁԲ-2020/8-3-ԵՊԲՀ-3>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	30232231/5	Կոշտ սկավառակի սարք 3	0	0	0	0	0	57960	57960	57960	57960	57960	57960	57960	57960
6	30237113/1	Ցանցային կոնեկտոր 1	0	0	0	0	0	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000
7	30237113/2	Ցանցային կոնեկտոր 2	0	0	0	0	0	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000
18	31221230/1	Մալուխ patch cord cat6a UTP 0.5, 1, 2, 3, 5մ	0	0	0	0	0	489000	489000	489000	489000	489000	489000	489000	489000
19	30237132/2	Մալուխ համակարգ-չային micro USB	0	0	0	0	0	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500
20	30237132/3	Մալուխ համակարգ-չային micro USB 3.0	0	0	0	0	0	24900	24900	24900	24900	24900	24900	24900	24900
21	30237132/4	Մալուխ համակարգ-չային micro USB 3.1 Type C	0	0	0	0	0	24900	24900	24900	24900	24900	24900	24900	24900

23	30237111/5	Մարտկոց 1.5Վ ԱԱ	0	0	0	0	0	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000
26	30237111/8	Մարտկոց 9Վ	0	0	0	0	0	27900	27900	27900	27900	27900	27900	27900	27900
27	30237111/9	Մարտկոց 12Վ	0	0	0	0	0	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
28	30237111/10	Մարտկոց 1.5Վ ԱԱ վերալիցքավորվող	0	0	0	0	0	105000	105000	105000	105000	105000	105000	105000	105000
29	30237111/11	Մարտկոց 1.5Վ ԱԱԱ վերալիցքավորվող	0	0	0	0	0	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000
31	30237137/1	Տեսաազդանշանի սարք USB-Video	0	0	0	0	0	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000
34	30237460/1	Համակարգչային ստեղնաշար+մկնիկ անլար	0	0	0	0	0	99960	99960	99960	99960	99960	99960	99960	99960

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.06.19 16:27:45 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Վանդիստ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 17/30,Սայաթ-Նովա 24/2,
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500-2226509 1001
ՀՎՀՀ 02705726
Հեռ՝ +374-010 52-04-96
Էլ. Հասցե՝ van_muradyan@yahoo.com
Տնօրեն՝ Վան Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN VAN 3105840125
Date: 2020.06.18 15:21:04 GMT+04:00

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
<<ԳՀԱՊՁԲ-2020/8-3-ԵՊԲՀ-3>> ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
<<ԳՀԱՊՁԲ-2020/8-3-ԵՊԲՀ-3>> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն